



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱԶԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՋ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«15» հունվար 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետ

 Մ. Անանյան

ԳԲԽ-54/15 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Ջ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ նաև Կենտրոն) կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Սոս-97» ՍՊԸ-ի 29.12.2015թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Սոս-97» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Սոս-97» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 29.12.2015թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ Ընկերությունը մասնակցել է Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված «ԵԲ-ՇՀԱՊՁԲ-16/5» և «ԵԲ-ՇՀԱՊՁԲ-16/1» ծածկագրերով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգերին (այսուհետ նաև՝ Ընթացակարգեր)՝ զբաղեցնելով 1-ին տեղ: Այնուհետև, սահմանված կարգով Ընկերությունը Պատվիրատուին ներկայացրել է

անհրաժեշտ որակավորման փաստաթղթերը, այդ թվում նաև նախկինում Ընկերության կողմից իրականացված սննդամթերքի մատակարարման պայմանագրերը:

Ընկերության կողմից ներկայացված պայմանագրերը Պատվիրատուի կողմից դիտվել են որպես ոչ հավաստի և վերջինիս կողմից համապատասխան գրությամբ ուղարկվել է ՀՀ ֆինանսների նախարարություն՝ վերոհիշյալ գրությունների իսկությունը ստուգելու համար:

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից, ի պատասխան Երևանի քաղաքապետարանի գրության, ստացվել է պատասխան, համաձայն որի տվյալ պայմանագրերի իսկությունը ՀՀ ֆինանսների նախարարությունը չի կարող հաստատել, քանի որ նախարարության տեղեկատվական բազայում հիշյալ պայմանագրերը առկա չեն:

Ընկերությունը նշել է, որ գործող օրենսդրությամբ չկա պահանջ, համաձայն որի ոչ պետական ընկերությունների միջև կնքված պայմանագրերը պետք է ներկայացվեն ՀՀ ֆինանսների նախարարության հաստատմանը: Չնայած այդ հանգամանքին, Երևանի քաղաքապետարանը շարունակում է մնալ այն կարծիքին, որ Ընկերության կողմից որակավորման փուլում ներկայացված պայմանագրերը հավաստի չեն, ուստի և մերժել է Ընկերության ներկայացրած հայտերը և հրաժարվում է կնքել պայմանագիր Ընկերության հետ:

Ընկերությունը վկայակոչել է Օրենքի 5-րդ, 31-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերը և 33-րդ հոդվածները:

Ընկերությունը բողոքով խնդրել է որպես միջանկյալ ընթացակարգ՝ կիրառել ժամանակավոր միջոց և կասեցնել «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/5» և «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/1» ծածկագրերով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգերը կամ չկայացած հայտարարել «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/5» և «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/1» ծածկագրերով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգերը:

Ընկերության՝ միջանկյալ ընթացակարգ կիրառելու վերաբերյալ միջնորդությունը քավարարվել է ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի 12.01.2016թ. որոշմամբ:

Միևնույն ժամանակ, 14.01.2016թ. ի լրումն Ընկերության 29.12.2015թ. բողոքի ներկայացված գրությամբ՝ Ընկերությունը խնդրել է դադարեցնել «ԵԲ-ՇՀԱՊՁԲ-16/5» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 5 արձանագրությամբ, և «ԵԲ-ՇՀԱՊՁԲ-16/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 10 արձանագրությամբ կայացված՝ Ընկերության հայտերը մերժելու մասին որոշումները:

«Սոս-97» ՍՊԸ-ի ներկայացուցիչը, մասնակցելով 12.01.2016թ. ժամը 17:30-ին Կենտրոնում կայացած ԳԲԽ-54/15 բողոքը քննող հանձնաժողովի նիստին, պնդել է իր բողոքը:

2. Երևանի քաղաքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիքորոշումը

Երևանի քաղաքապետարանը 12.01.2016թ. թիվ 02/61-80 գրությամբ ներկայացրել է «ԵԲ-ՇՀԱՊՁԲ-16/5» և «ԵԲ-ՇՀԱՊՁԲ-16/1» ծածկագրերով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգերին վերաբերող փաստաթղթերի պատճենները:

Միաժամանակ վերոհիշյալ գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵԲ-ՇՀԱՊՁԲ-16/5» ծածկագրով ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Սոս-97» ՍՊԸ-ն:

Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 71-րդ կետի դրույթներով, 20.11.2015թ. ՀՀ ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացրել Ընկերության կողմից ներկայացված տվյալների (պայմանագրերի կնքված և կատարված լինելու մասին) իսկության վերաբերյալ, ինչին ի պատասխան՝ ՀՀ ֆինանսների նախարարության 11.12.2015թ. թիվ 01/4-5/39797-15 գրությամբ տեղեկացվել է, որ ՀՀ ֆինանսների նախարարության հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա չէ Ընկերության կողմից տրամադրված պայմանագրերի և ընդունման-հանձնման արձանագրություններին համապատասխանող տեղեկատվություն:

Պատվիրատուն հայտնել է, որ «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/1» ծածկագրով ընթացակարգի 22-րդ, 30-րդ, 31-րդ և 48-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Սոս-97» ՍՊԸ-ն: Ընկերության կողմից ներկայացված՝ հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող՝ նախկինում կատարած պայմանագրերի պատճենները և դրանց պատշաճ կատարումը հավաստող ակտերի (հանձնման-ընդունման արձանագրություններ) պատճենները նույնն են, ինչ Ընկերությունը տրամադրել է «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/5» ծածկագրով ընթացակարգի ժամանակ:

Վերոգրյալով պայմանավորված՝ Պատվիրատուի կողմից «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/1» և «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/5» ծածկագրերով ընթացակարգերին Ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերը համարվել են իրականությանը չհամապատասխանող և Ընկերության կողմից ներկայացված հայտերը մերժվել են:

3. ԳԲԽ-54/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-54/15 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Երևանի քաղաքապետարանի կողմից Երևանի քաղաքապետարանի կարիքների համար սննդի փաթեթի և սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպվել են «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/1» և «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/5» ծածկագրերով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգեր:

2. «Սոս-97» ՍՊԸ-ն Երևանի քաղաքապետարանի կողմից՝ Երևանի քաղաքապետարանի կարիքների համար սննդի փաթեթի և սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/1» և «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/5» ծածկագրերով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգերին մասնակցելու նպատակով համապատասխանաբար 16.10.2015թ. և 05.11.2015թ հայտեր է ներկայացրել:

3. «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 22.10.2015թ. ժամը

10:00-ի թիվ 4 արձանագրության 1.5-րդ կետով որոշել է Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Սոս-97» ՍՊԸ-ին:

4. «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 06.11.2015թ. ժամը 10:00-ի թիվ 3 արձանագրության 1.2-րդ կետով որոշել է Ընթացակարգի 22-րդ, 30-րդ, 31-րդ, 48-րդ չափաբաժինների համար 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Սոս-97» ՍՊԸ-ին:

5. «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 22.10.2015թ. ժամը 10:00-ի թիվ 4 արձանագրության 1.6-րդ կետով որոշել է Կարգի 47-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետով նախատեսված ծանուցումն ուղարկել «Սոս-97» ՍՊԸ-ին, իսկ «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 06.11.2015թ. ժամը 10:00-ի թիվ 3 արձանագրության 1.3-րդ կետով որոշել է Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված ծանուցումն ուղարկել «Սոս-97» ՍՊԸ-ին:

6. Ընկերության կողմից սահմանված կարգով Ընթացակարգերի գնահատող հանձնաժողովներին ներկայացվել են որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, այդ թվում նաև Կարգի 65-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված՝ նախկինում կատարած պայմանագրերի պատճենները և պայմանագրերի՝ սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտերի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները:

7. Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը Ընթացակարգերի գնահատող հանձնաժողովներին ներկայացրել է նախկինում կատարած նույն պայմանագրերի պատճենները և պայմանագրերի սահմանված ժամկետում կատարումը հավաստող նույն ակտերի պատճենները, Պատվիրատուն, ղեկավարվելով Կարգի 71-րդ կետի դրույթներով, 20.11.15թ. թիվ 01/61-24285 գրությամբ հարցում է կատարել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ Ընկերության կողմից ներկայացված տվյալների իսկությունը պարզելու նպատակով:

8. Ի պատասխան Երևանի քաղաքապետարանի 20.11.15թ. թիվ 01/61-24285 գրության՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը 11.12.2015թ. թիվ 01/4-5/39797-15

գրությամբ հայտնել է, որ **ՀՀ ֆինանսների նախարարության հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա չէ «Սոս-97» ՍՊԸ-ի կողմից Երևանի քաղաքապետարանին տրամադրված թվով ութ առուվաճառքի և մատակարարման պայմանագրերին և ընդունման-հանձնման արձանագրություններին համապատասխանող տեղեկատվություն, որով պայմանավորված հնարավոր չէ հավաստել վերջիններիս իսկությունը:**

9. Հիմք ընդունելով ՀՀ ֆինանսների նախարարության 11.12.2015թ. թիվ 01/4-5/39797-15 գրությունը՝ «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/5» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 17.12.2015թ. ժամը 10:00-ի թիվ 5 արձանագրության 3-րդ կետով և «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 21.12.2015թ. ժամը 10:00-ի թիվ 10 արձանագրության 2-րդ կետով որոշել է մերժել «Սոս-97» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգերին մասնակցելու նպատակով ներկայացված հայտերը:

10. ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝ ի դեմս ԳԲԽ-54/15 բողոքը քննող հանձնաժողովի, 12.01.2016թ. կայացրած որոշմամբ բավարարել է «Սոս-97» ՍՊԸ-ի՝ որպես միջանկյալ ընթացակարգ ժամանակավոր միջոց կիրառելու վերաբերյալ պահանջը:

4. ԳԲԽ-54/15 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Սոս-97» ՍՊԸ-ի 29.12.2015թ. ներկայացրած բողոքը, Երևանի քաղաքապետարանի 12.01.2016թ. թիվ 02/61-80 գրությունը և կից փաստաթղթերը, ՀՀ ֆինանսների նախարարության 11.12.2015թ. թիվ 01/4-5/39797-15 գրությունը՝ հայտնում է հետևյալը.

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: **Բավարար են գնահատվում հրավերով**

նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի համաձայն՝

5. Առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում՝

1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները)։

2) հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և, հրավերով սահմանված դեպքերում ու կարգով, գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը։

6. Հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները։ Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված։

Կարգի 47-րդ կետի 2-րդ կետը սահմանում է, որ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով՝ ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն Կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը։ Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին։

Կարգի 71-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ ***գնահատող հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝*** օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով

իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: **Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:**

Հիմք ընդունելով Կարգի 71-րդ կետով իրենց վերապահված իրավունքը՝ Ընթացակարգերի գնահատող հանձնաժողովների կողմից Ընկերության կողմից ներկայացված տվյալները՝ տվյալ դեպքում պայմանագրերը, ուղարկվել են ՀՀ ֆինանսների նախարարություն՝ դրանց իսկությունը պարզելու նպատակով:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 11.12.2015թ. թիվ 01/4-5/39797-15 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ֆինանսների նախարարության հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա չէ «Սոս-97» ՍՊԸ-ի կողմից Երևանի քաղաքապետարանին տրամադրված թվով ութ առուվաճառքի և մատակարարման պայմանագրերին և ընդունման-հանձնման արձանագրություններին համապատասխանող տեղեկատվություն, որով պայմանավորված հնարավոր չէ հավաստել վերջիններիս իսկությունը:

Այսպիսով, ՀՀ ֆինանսների նախարարությունը վերոհիշյալ գրությամբ չի հաստատել Ընկերության կողմից ներկայացված պայմանագրերի՝ իրականությանը չհամապատասխանելու հանգամանքը, այլ ընդամենը հայտնել է, որ հարկային մարմնի տեղեկատվական բազայում նշված պայմանագրերի և հանձնման-ընդունման ակտերի վերաբերյալ տեղեկություններ առկա չեն, ինչով և պայմանավորված լիազոր մարմինը հնարավորություն չունի հավաստելու դրանց իսկությունը:

Հետևաբար՝ ՀՀ ֆինանսների նախարարության 11.12.2015թ. թիվ 01/4-5/39797-15 գրությամբ ներկայացված դիրքորոշումը բավարար չի կարող համարվել Կարգի 71-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հիմքով՝ Ընթացակարգերին ներկայացված Ընկերության հայտերը մերժելու համար, ուստի Պատվիրատուի կողմից խախտվել են գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջները:

Գտնում ենք, որ Պատվիրատուի կողմից խախտվել են Օրենքի 31-րդ հոդվածի և Կարգի 71-րդ կետի 1-ին ենթակետի պահանջները, հետևաբար «Սոս-97» ՍՊԸ-ի 29.12.2015թ. բողոքն հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ առաջարկում ենք «Սոս97» ՍՊԸ-ի 29.12.2015թ. բողոքը բավարարել. դադարեցնել «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/5» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 5 արձանագրությամբ և «ԵՔ-ՇՀԱՊՁԲ-16/1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 10 արձանագրությամբ կայացված՝ «Սոս-97» ՍՊԸ-ի հայտերը մերժելու մասին որոշումները:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝



Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական
խորհրդատվության վարչության պետ՝



Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և
սահազանգման բաժնի վարիչ՝



Մ. Կատվալյան

Գնումների բողոքարկման և
սահազանգման բաժնի առաջատար
մասնագետ՝ ԳԲԽ-54/15 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար՝



Ա. Ծատուրյան